



Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյանի ջրավազանային տարածք.

գետավազանային կառավարման պլանի նախագծի շուրջ

հանրային խորհրդատվական հանդիպում

Ախուրյանի ջրավազանային տարածքի հեռանկարային պատկերի

ձևավորում

26 մարտի, 2015թ.

ՀՀ, ք. Գյումրի, 3104, Հաղթանակի փ. 25,

«Բեռլին Արթ» հյուրանոցի խորհրդակցությունների սրահ

Հեռ.՝ +374-312-5-76-59, ֆաքս՝ +374-312-5-03-86

Օրակարգ

Արձանագրությանը կից ներկայացվում է Ախուրյանի գետավազանային տարածքի շուրջ հանրային խորհրդատվական հանդիպման օրակարգը (Հավելված 1):

Մասնակիցներ

Արձանագրությանը կից ներկայացվում է հանդիպման մասնակիցների ցուցակը (Հավելված 2):

Նպատակներ

- Ախուրյանի պիլոտային գետավազանի համար մշակված գետավազանային կառավարման պլանի (ԳԿՊ) նախագծի և նախատեսվող միջոցառումների ծրագրի ներկայացում.
- ԳԿՊ-ի նախագծի, ներառյալ նախատեսվող միջոցառումների քննարկում և կարծիքների, մեկնաբանությունների, առաջարկությունների ներկայացում.
- Հասարակական մասնակցության խթանում և վերջնական ԳԿՊ-ի մշակմանն օժանդակում:

Քննարկումների ամփոփում

ԲԱՑՈՒՄ

Հանդիպումը մեկնարկեց ՀՀ Բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

կառավարման գործակալության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետ պրն. Դավիթ Գրիգորյանի ելույթով: Պրն. Գրիգորյանն իր ողջույնի խոսքում նշեց հանդիպման նպատակը, այն է՝ ԳԿՊ-ի նախագծի քննարկում և կարծիքների արտահայտում:

ՄԳՇՄՊ ծրագրի թիմի ղեկավարի տեղակալ պրն. Զուրաբ Զինչարաձեն անդրադարձավ մինչև օրս ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներին, որ հանգեցրել են ԳԿՊ-ի նախագծի մշակման, և խրախուսեց հանդիպման ընթացքում ցուցաբերել ակտիվ մասնակցություն: Պրն. Զինչարաձեն ընդգծեց ՁՇԴ-ի և գետավազանային կառավարման պլանավորման կարևորությունը, ինչպես նաև պիլոտային ջրավազանային տարածքում պլանի իրականացման նշանակությունը:

Ողջույնի խոսքին հետևեց մասնակիցների հերթով ներկայացումը:

I. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԻՍՏ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ

Հանդիպման առաջին նիստին ներկայացվեցին ԳԿՊ-ի նախագիծը և դրա մշակման նախադրյալները: Նիստը վարեց պրն. Դավիթ Գրիգորյանը:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնից (ԿՏԲԿ) տկն. Մագդոլնա Թոտ Նազին ներկայացրեց հանդիպման նպատակները և օրակարգի ամփոփ նկարագրությունը: Նա նշեց, որ հանդիպումը ԳԿՊ-ի նախագծի վերաբերյալ մեկնաբանությունների տրման հնարավորություն է ընձեռում, թեև այն խորհրդատվական գործընթացի միայն սկիզբն է՝ ԳԿՊ-ի նախագծի վերաբերյալ կարծիքների արտահայտման առաջին հնարավորությունը: Հանդիպումից հետո մասնակիցները կարող են մինչև մայիսի վերջն իրենց գրավոր մեկնաբանություններն ուղարկել նշված էլ. փոստի հասցեով:

Պրն. Զուրաբ Զինչարաձեն ներկայացրեց ՄԳՇՄՊ ծրագիրը, ծրագրի հիմնական նպատակները, մինչև օրս ունեցած ձեռքբերումները, ինչպես նաև 2015թ.-ին ծրագրի շրջանակում նախատեսվող գործողությունները (*ավելի մանրամասն տեղեկությունները տե՛ս Հավելված 3-ում*):

Ներկայացումից հետո մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց այն հանգամանքի վրա, որ Ախուրյանի պիլոտային ջրավազանը բնութագրվում անդրսահմանային է, և ջրավազանի վերին հոսանքները հիմնականում գտնվում են Թուրքիայի տարածքում: Հայաստանում ջրավազանի վրա ազդեցություն ունեցող հիմնական խնդիրները, որպես այդպիսին, սկիզբ են առնում Թուրքիայում, և դեռ պարզ չէ, թե ինչպես կարելի է այդ խնդիրները լուծել: Ցավոք սրտի, Ախուրյան գետը համարվում է խիստ փոփոխվող ջրային մարմին: Պրն. Զինչարաձեն համաձայնեց և ավելացրեց, որ, դժբախտաբար, այդ խնդիրն առկա է նաև Վրաստանի պիլոտային գետավազանում: Նա նաև նշեց, որ ԵՄ միջազգային համայնքի ներգրավմամբ ջանքեր են գործադրվում տվյալների մատչելիությունն ապահովելու համար, թեև դա բարդ գործընթաց է: ԵՄ-ին անդամակցելու Թուրքիայի ցանկությունն ինչ-որ կերպ կարող է մեղմել լրացուցիչ տվյալների և տեղեկատվության հասանելիության խնդիրը:



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

ՄԳՇՄՊ ծրագրի՝ Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ պրն. Վահագն Տոնոյանը համառոտ ներկայացրեց ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի (ՋՇԴ) մոտեցումը, ներառյալ գետավազանային կառավարման պլանավորման գործընթացի հիմնական քայլերը (*ավելի մանրամասն տեղեկությունները տե՛ս Հավելված 3-ում*):

Ներկայացումից հետո մասնակիցները խնդրեցին պարզաբանել «լավ էկոլոգիական վիճակ» հասկացությունը: Պրն. Տոնոյանն իր պատասխանում նշեց, որ Հայաստանում ներկայում չի իրականացվում կենսաբանական մոնիտորինգ:

«Ռեսուրսների կառավարում» ՄՊԸ-ից ջրավազանային պլանավորման փորձագետ տկն. Լիլիթ Հարությունյանն ամփոփ ներկայացրեց Ախուրյանի ԳԿՊ-ի նախագիծը, մասնավորապես պլանի նախագծի կառուցվածքը, դրանում արտացոլված խնդիրները, պլանի մշակման համար կիրառված մեթոդաբանությունը, ջրավազանի ջրային ռեսուրսների ներկա վիճակը, սահմանված բնապահպանական նպատակները և այլն (*ավելի մանրամասն տեղեկությունները տե՛ս Հավելված 3-ում*):

Ներկայացումն ընդհատվեց պարզաբանումների նպատակով, որոնց շարքում նշվեց նախագծի մեջ լեզվի ներդաշնակեցման և վերանայման անհրաժեշտությունը, ինչպես նաև պարզաբանում արվեց ջրային մարմինների տարանջատման կապակցությամբ: Ծավալվեց էկոլոգիական հոսքի և ջրօգտագործման թույլտվությունների շուրջ քննարկում: Նշվեց, որ չնայած թույլտվություններում ամրագրված պայմաններին, ջրառը գերազանցում է թույլատրված ծավալները: Բացի այդ, բարձրացվեց ռադիոակտիվ տարրերի հարցը, քանի որ վերջինս հաշվի չի առնվում ՋՇԴ-ի շրջանակում: Ավելի ուշ քննարկում ծավալվեց խմելու ջրի խողովակների վրա շահագործվող հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) ազդեցությունների մասին: Այդ կապակցությամբ կազմակերպիչները նշեցին, որ նման գնահատում չի իրականացվել, քանի որ ԳԿՊ-ում հիմնականում ուսումնասիրվում են բնական պայմանները/բնական ջրային մարմինները: Ընդգծվեց, որ գլխավոր նպատակը պետք է լինի Ախուրյանի ջրավազանն ուսումնասիրելիս կենտրոնանալ բնական էկոհամակարգերի պահպանման վրա:

Հարց ու պատասխանի ընթացքում նշվեց, որ ջրավազանի բնութագրումը կենսաբազմազանության առումով համապատասխան չէ: Ծրագրի թիմին առաջարկվեց օգտագործել Ախուրյանի ջրավազանի վերաբերյալ 2005թ.-ի հրատարակությունը:

«Ռեսուրսների կառավարում» ՄՊԸ-ից պրն. Արամ Գևորգյանը ներկայացրեց ԳԿՊ-ում առաջարկվող՝ աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումները և այդ միջոցառումների համար սահմանված առաջնահերթությունը (*ավելի մանրամասն տեղեկությունները տե՛ս Հավելված 3-ում*):

Մասնակիցները խնդրեցին պարզաբանել փաստաթղթում օգտագործված տերմինաբանությունը՝ կապված հոսքի և կեղտաջրերի մաքրման հետ: Բացի այդ, նշվեց, որ Շիրակի և Գյումրիի համար արդեն մշակվել և հաստատվել են գլխավոր պլաններ (Շիրակի հեռանկարային զարգացում), որոնք պետք է հաշվի առնվեն: Մասնակիցները խնդրեցին



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսոցիումի կողմից

լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել գյուղատնտեսական ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառման վերաբերյալ, որ նախատեսված էր իրականացնել գոմաղբի հավաքմամբ և լավագույն փորձի կիրառմամբ: Նշվեց, որ նմանատիպ միջոցառում իրականացվել է, սակայն դա հնարավոր չի եղել՝ հաշվի առնելով, որ գոմաղբն օգտագործվում է որպես ռեսուրս՝ էներգիայի ստացման աղբյուր կամ պարարտանյութ: Այնուհետև ավելացվեց, որ շինանյութի վերամշակման ընթացքում ջուր չի օգտագործվում և/կամ այն կուտակվում է ջրամբարում և վերամշակվում: Ինչ վերաբերում է Արթիկի շրջանից ստրոնցիումային աղտոտմանը, առաջարկվեց լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնել: Առաջարկվեց նաև համապատասխանաբար հղումներ կատարել տվյալների յուրաքանչյուր աղբյուրին, ինչպես նաև օգտագործված գրականությանը: Մասնակիցները մտահոգություն հայտնեցին, որ ստորերկրյա ջրատար հորիզոնների կապակցությամբ ոչ մի միջոցառում չի ձեռնարկվում:

Հարց տրվեց, թե ինչով է հիմնավորված Ախուրյան գետի նախկին հունի վերականգնումը: Տկն. Հարությունյանը նշեց, որ դա հիմնականում հիմնավորված է ԵՄ ՁՇԴ-ի մոտեցմամբ, քանի որ, ըստ այդ մոտեցման, լավ վիճակը բնականին մոտ վիճակն է: Մասնակիցներից մեկը նշեց, որ «International Park Working Group» նախաձեռնության շրջանակում պատրաստվել է Ախուրյան գետի նախկին հունի վերաբերյալ հաշվետվություն: Վերջինիս համաձայն՝ որևէ միջոցառման անհրաժեշտություն չկա. հնում եղած կորությունները պահպանված են և սնումն իրականացվում է ջրի մակարդակի բարձրանալու ընթացքում: Որևէ միջոցառման հնարավորություն էլ չկա, քանի որ այն Ազգային պարկի մաս է կազմում և ունի բնական արգելավայրի կարգավիճակ: Բացի այդ, տարիների ընթացքում էկոհամակարգն արդեն վերաձևավորվել է. սկզբնական վիճակի վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծախսերը հիմնավորված չեն:

Քննարկում ծավալվեց մկնդեղի բարձր կոնցենտրացիայի և աղտոտման աղբյուրի վերաբերյալ: Պրն. Տոնոյանը տեղեկացրեց, որ մոնիտորինգ չի իրականացվել, սակայն ծրագրի շրջանակում ապրիլին տեղի կունենա նոր դաշտային այցելություն՝ իրավիճակի մասին ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով: Քննարկվեցին նաև Ախուրյանի ջրամբարում ֆոտրային և բորային աղտոտումը և դրա պատճառները՝ չբացատրելով, որ կարող է լինել Թուրքիայում սկիզբ առնող անդրսահմանային խնդիր: Պրն. Տոնոյանը հայտարարեց, որ առաջիկա դաշտային հետազոտության նմուշառման կետերը կընտրվեն՝ հաշվի առնելով մասնակիցների մեկնաբանությունները:

Հարց տրվեց, թե ինչու են Արթիկի գյուղատնտեսությունից ճնշումները համարվել առաջնահերթ, քանի որ այդ տեսանկյունից էական են հատկապես Աշոցքի տարածաշրջանից ճնշումները՝ անասնապահությամբ զբաղվող բնակչության աճի հետևանքով: Տեղեկացվեց, որ առաջնահերթությունը սահմանվել է մարզպետարանի տրամադրած տվյալների հիման վրա: Նշվեց, որ այդ տվյալները հաշվի են առնում արոտավայրերի ընդհանուր տարածքը և անասունների գլխաքանակը, մինչդեռ մյուս կողմից անտեսում են այն հանգամանքը, որ արոտավայրերը հիմնականում հեռավոր վայրերում են գտնվում: Այսպիսով, բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրերում տեղի է ունենում գերաբաժեցում:



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսոցիումի կողմից

Մասնակիցները կրկին անդրադարձան ռադիոակտիվ աղտոտման թեմային և որ ԳԿՊ-ում, օրինակ, չի դիտարկվում ռադոնային աղտոտումը: Քննադատություններ են հնչեցնում, որ պլանի նախագծի մշակման համար հիմք հանդիսացող ԵՄ ՁՇԴ-ի մոտեցմամբ հաշվի չի առնվում ռադիոակտիվությունը, որը մեծ խնդիր է՝ էլնելով հիմնականում աշխարհագրական կառուցվածքից և տեկտոնային խզվածքից: Բացատրվեց, որ, ԵՄ ՁՇԴ-ի համաձայն, հաշվի են առնվում մարդածին ճնշումները, և չի դիտարկվում շրջակա միջավայրի բնական փոփոխություններից բխող աղտոտումը: Ավելացվեց, որ կան ԵՄ այլ դիրեկտիվներ, որոնցում ռադիոակտիվ աղտոտման թեման արժարժված է:

Տկն. Լիլիթ Հարությունյանն ամփոփ ներկայացրեց հիդրոմորֆոլոգիական փոփոխությունների առումով ԳԿՊ-ում առաջարկվող կարևորագույն միջոցառումները և միջոցառումների համար սահմանված առաջնահերթությունը՝ կենտրոնանալով հիմնականում հիդրոմորֆոլոգիայի, բնական հոսքի և փոխկապակցված այլ խնդիրների վրա (*ավելի մանրամասն տեղեկությունները տե՛ս Հավելված 3-ում*):

Բացի այդ, պրն. Տոնոյանը միջոցառումների հետ կապված օրինակ բերեց: ՄԳՇՄՊ-ի պիլոտային ծրագրի շրջանակում Մեծամորի վրա 3 կետերում տեղադրվել են թվային չափիչ սարքեր, որոնց միջոցով իրական ժամանակի առցանց տվյալներ են փոխանցվում վերահսկող մարմնին և ջրօգտագործողների ընկերակցությանը՝ իրազեկելով նրանց ջրօգտագործման թույլտվությունների պայմանների կատարման մասին: Սա ավտոմատ կառավարման համակարգի ներդրմանն ուղղված քայլերից միայն մեկն է: Պիլոտային ծրագրի ծախսերը հաշվի կառնվեն, և էքստրապոլացիայի մեթոդով կորոշվի մնացած տեղերում նման սարքերի տեղադրման հարցը: Պարտադիր չէ, որ հանրությունը հոգա այդ ծախսերը. օրինակ՝ կարելի է ջրօգտագործողներից պահանջել, որպեսզի նրանք տեղադրեն նման չափիչ սարքեր:

Առկա հորատանցքերի փակման ծախսերի կապակցությամբ հղում կատարվեց ՀՀ կառավարության թիվ 1233 որոշմանը, որով կարգավորվում է վերոնշյալ խնդիրը: Առկա բյուջեն օգտագործվում է միայն համայնքային կարևոր հորատանցքերի համար. անհատների շահագործմանը հանձնված հորատանցքերը պետք է փակվեն նրանց սեփական միջոցներով:

Նիստի ավարտին քննարկումը հիմնականում վերաբերում էր կոյուղու համակարգի բացակայության պատճառով չմաքրված կեղտաջրերից աղտոտմանը: Վերջինս ահռելի ճնշում է գործադրում ստորերկրյա ջրերի և խմելու ջրամատակարարման վրա:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏ

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնից տկն. Իմոլա Կոշտան ծանոթացրեց աշխատանքային խմբերով (ԱԽ) քննարկման պայմաններին՝ առաջարկելով խմբերի հետևյալ բաժանումը.



Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսոցիումի կողմից

ԱԽ 1-ը կկենտրոնանա (կետային և ցրված աղբյուրներից) աղտոտման թեմայի շուրջ՝ պատասխանելով ստորև բերված հարցերին.

1. Համաձայն էք արդյոք պլանում սահմանված նպատակներին/խնդիրներին և առաջարկվող բարելավմանը:
2. Կա՞ն արդյոք աղտոտման կանխմանն ուղղված այլ միջոցառումներ, որոնք դիտարկված չեն պլանում:
3. Համաձայն էք արդյոք միջոցառումների համար սահմանված առաջնահերթությանը: Եթե ոչ, ապա ի՞նչ փոփոխություն էք առաջարկում և ինչու՞ (հիմնավորել):
4. Որո՞նք են այն միջոցառումները կամ նախաձեռնությունները, որ կարող են իրականացվել Ձեր կամ Ձեր կազմակերպության օգնությամբ:
5. Ի՞նչ առաջարկություններ ունեք միջոցառումների ծրագրի ֆինանսավորման ապահովման համար:

ԱԽ 2-ը կկենտրոնանա հիդրոմորֆոլոգիական փոփոխությունների (ջրառ, հիդրոէկոլոգիայի արտադրություն և այլն) թեմայի շուրջ՝ պատասխանելով ստորև բերված հարցերին.

1. Համաձայն էք արդյոք պլանում սահմանված նպատակներին/խնդիրներին և առաջարկվող բարելավմանը:
2. Կա՞ն արդյոք այս խմբին պատկանող այլ կարևոր միջոցառումներ, որոնք պլանում չեն դիտարկվել:
3. Համաձայն էք արդյոք միջոցառումների համար սահմանված առաջնահերթությանը: Եթե ոչ, ապա ի՞նչ փոփոխություն էք առաջարկում և ինչու՞ (հիմնավորել):
6. Որո՞նք են այն միջոցառումները կամ նախաձեռնությունները, որ կարող են իրականացվել Ձեր կամ Ձեր կազմակերպության օգնությամբ:
4. Ի՞նչ առաջարկություններ ունեք միջոցառումների ծրագրի ֆինանսավորման ապահովման համար:

III. ՓՈԽՆՄԵՆՍԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Գյումրիի Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի Երկրաֆիզիկայի և երկրաբնապահպանության լաբորատորիայի գիտաշխատող **պրն. Ռուլան Գասպարյանը** ներկայացրեց կետային և ցրված աղբյուրներից աղտոտման վերաբերյալ քննարկման արդյունքները.

- Աշխատանքային խումբը համաձայն էր պլանում սահմանված նպատակներին, սակայն որոշ վերապահումներով: Անդրադարձ կատարվեց հետևյալին.



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

- Բնական և արհեստական ջրային մարմինների մաքրում շինարարական աղբից, հատկապես Շիրակի ջրանցքում և հոսքի կառավարման համակարգի վրա.
 - Շիրակի շուրջը տեղադրված գաբիոնի լիակատար ուսումնասիրություն և շինարարական աշխատանքներ՝ ստորերկրյա ջրերի աղտոտումը կանխելու, ինչպես նաև սողանքները բացահայտելու նպատակով.
 - 2000 հեկտար գյուղատնտեսական հողատարածքների ռոտման համար օգտագործվում են Արմավիրի, Մեծամորի և հարևան համայնքների կոյուղաջրերը: Առաջարկվում է ապահովել կեղտաջրերի ինքնամաքրում կամ այլընտրանքային ջրային ռեսուրսներից քաղցրահամ ջրերի ավելացում.
 - Բենիամին համայնքի հարակից տարածքում նոր աղբանոցի կառուցման նպատակով՝ երկրաբնապահպանական վիճակի գնահատում և վերլուծություն.
 - Ախուրյանի գետավազանում ռադոնային աղտոտման գնահատում և գիտահետազոտության իրականացում.
 - Գետավազանի տարածքում սողանքների կանխման և դրանց ազդեցությունների մեղմման միջոցառումների մշակում.
 - Ջրամբարի պատվարների ամրության երաշխավորմանն ուղղված միջոցառումներ.
 - Ախուրյանի ջրամբարի և խմելու ջրի խողովակների վրա շահագործվող փոքր ՀԷԿ-երի ազդեցությունների ուսումնասիրություն (պահպանման աշխատանքների արդյունքում տարբեր յուղերից և վազելինից աղտոտում, ինչպես նաև էկոլոգիական հոսքի և կենսաբանության վրա ազդեցությունները): Որոշ մասնակիցներ նաև մտահոգություն հայտնեցին ՀԷԿ-երի՝ որպես արհեստական էլեկտրամագնիսական դաշտերի աղբյուրների և ջրի վրա դրանց ազդեցության կապակցությամբ.
 - Ձկների միգրացիան ապահովելու նպատակով՝ ձկների համար անցուղիների կառուցում:
- ԱԽ 1-ը սահմանված առաջնահերթության առումով առարկություններ չինչեցրեց, սակայն վերոնշյալ առաջարկություններով նշեց որոշ առաջնահերթ միջոցառումներ:
- ԱԽ-ի անդամները նշեցին, որ իրենց կազմակերպությունները կարող են օժանդակել ստորև բերված միջոցառումների իրականացման գործընթացին.
- Գետավազանում ջրային մարմինների մաքրման աշխատանքների կազմակերպում, մասնավորապես՝ կոշտ թափոնների հավաքում (տեղական համայնքներ).
 - Գյումրիի Օրհուս կենտրոնն առաջարկեց օժանդակել տեղեկատվության տարածման գործում.
 - Ջրամբարների պատվարների սեյսմականության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում (Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն՝ ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում).



**Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր**



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

- Ռադոնային աղտոտման, սողանքների և քյահրիզների ուսումնասիրություն (Երկրաֆիզիկայի ինստիտուտ՝ ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում):

- Ինչ վերաբերում է միջոցառումների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրներին, ապա խումբը նշեց տեղական ռեսուրսները (օր.՝ համայնքային հողատարածքների վարձակալումից ստացված միջոցները) և միջազգային համայնքի/կազմակերպությունների կողմից հնարավոր ֆինանսավորումը:

ԿՏԲԿ-ի Կովկասյան խորհրդի հայաստանյան անդամ, ծրագրի պատասխանատու տկն. Դշխուհի Սահակյանը ամփոփ ներկայացրեց հիդրոմորֆոլոգիական փոփոխությունների (ջրառ, հիդրոէլեկտրաէներգիայի արտադրություն և այլն) վերաբերյալ քննարկման հիմնական արդյունքները.

- ԱԽ-ն համաձայն չէ պլանի նախագծում միջոցառումների համար սահմանված առաջնահերթությանը. վերջինս պետք է կատարվի ռիսկերի գնահատման մեթոդաբանության համաձայն, որը ներառում է ֆինանսական միջոցները, միջոցառումների իրականացման ժամանակացույցը, ազդեցությունները, կենսաբազմազանությունը և այլն:
- Նշվեց, որ Օրհուս կենտրոնը և ԿՏԲԿ/Հայաստանը կարող են որոշ միջոցառումների իրականացման հարթակ հանդիսանալ:
- Հնչեցին առաջարկություններ ԳԿՊ-ի նախագծի մեջ ուղղումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

«Գեոինֆո» ՄՊԸ-ի տնօրեն պրն. Բենիամին Զաքարյանը մանրամասն ներկայացրեց առաջարկվող միջոցառումների վերաբերյալ մեկնաբանությունները, ինչպես նաև ավելացրեց.

- Ախուրյան գետի հունի վերականգնում՝ 11 կմ երկարությամբ (Բերդաշենից մինչև Փոքր Սեպասար համայնքը): Կարիք չկա այս միջոցառումն իրականացնելու, քանի որ բավականին մեծ ծավալով ջուր է անհրաժեշտ վերականգնման համար, ինչպես նաև կա ձևավորված նոր էկոհամակարգ և այն կորցնելու վտանգ: Բացի այդ, նշվեց, որ գետահունի փոփոխությունը կարող է գետի ջրի մակարդակի բարձրացման պատճառ դառնալ, որն ավերիչ կլինի X դարում կառուցված Մարմաշենի եկեղեցական համալիրի համար: Այսպիսով, խմբի կարծիքով լավագույն տարբերակն է՝ նախկին հունի համար ապահովել տարեկան ջրամատակարարում, իսկ նախկինի վերականգնման ընթացքում պահել ներկա հունը, քանի որ կան տարատեսակ կենդանիներ և բույսեր, և կարևոր է պահպանել նախկին և ներկա գետահունների շրջակա էկոհամակարգերը:
- Փոքր ՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվությունների պայմանների վերանայում և բարելավում: Այստեղ հիմնական խնդիրը կապված է էկոլոգիական հոսքի հետ, որը շատ տեղերում չի պահպանվում: Թույլտվություններում պետք է ներառված լինի



Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ) ծրագիր



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

Էկոլոգիական հոսքի ծավալը՝ ըստ ամիսների: Համապատասխանաբար առաջարկվում է նաև բարելավել գետերի էկոլոգիական հոսքի հաշվարկման մեթոդը՝ հաշվարկը կատարելով ըստ ամիսների և տարբերակված գետահատվածների (վերին և ստորին հոսանքներ): Բացի այդ, առաջարկվում է փոքր ՀԷԿ-երում ջրաչափերի տեղադրում և վերահսկման ուժեղացում:

- Լքված և ապօրինի շահագործվող հորատանցքերի վիճակի գնահատում և հետազոտություն: Հորատանցքերը պետք է փակվեն կամ կոնսերվացվեն կոնկրետ նպատակներով:
- Որպես լրացուցիչ միջոցառում առաջարկվում է բարելավել մոնիտորինգի համակարգը՝ Քասախ գետի վրա կառուցելով հիդրոլոգիական դիտակետ: Բացի այդ, առաջարկվում է մոնիտորինգի իրականացման գործընթացում ներգրավել համապատասխան փորձագետներին, որոնք ճշգրիտ տիրապետում են իրավիճակին:

Հարց ու պատասխանի ընթացքում բարձրացվեց ջրամբարի կառուցման հետևանքով ստորերկրյա ջրերի մակարդակի փոփոխության խնդիրը, որ կառաջացնի հեղեղումների մեծ վտանգ: Առաջարկվեց մշտադիտարկումներ անցկացնել՝ իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար:

Պրն. Վահագն Տոնյանը մասնակիցներին շնորհակալություն հայտնեց նրանց կարևոր մեկնաբանությունների համար և հիշեցրեց, որ հնարավորություն ունեն մինչև մայիսի 31-ը գրավոր լրացուցիչ մեկնաբանություններ ներկայացնելու Ախուրյանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ պրն. Աշոտ Աբգարյանին հետևյալ էլ. փոստի հասցեով՝ wrmaakhuryan@gmail.com: Բացի այդ, նշվեց, որ զուգահեռաբար կարծիքներ կհավաքվեն նախարարություններից, և աշնանը կներկայացվի պլանի վերջնական նախագիծը:

Եվրոպական բնապահպանական գործակալության «Սևանա լճի շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ» ծրագրի ազգային փորձագետ տկն. Լուսինե Թասլակյանը նշեց, որ կարևոր են նույնիսկ փոքր քայլերը: ԳԿՊ-ի մշակման գործընթացին պետք է օժանդակել նույնիսկ եթե դրա իրականացման համար ներկայում չկան հատկացված ֆինանսական միջոցներ, քանի որ վերջնական պլանը կարող է կարևոր դեր խաղալ ապագայում դոնոր կազմակերպություններից աջակցություն ստանալու համար:

Պրն. Վահագն Տոնյանն ավելացրեց, որ 20 տարի անց Ախուրյանի ջրավազանում պետական միջոցներով կրկին իրականացվում է պաշտոնական հիդրոերկրաբանական մոնիտորինգ, որը ՄԳՇՄՊ ծրագրի և ՀՀ Բնապահպանության նախարարության Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոնի միջև սերտ համագործակցության և աշխատանքների արդյունքն է:

Պրն. Դավիթ Գրիգորյանը հայտարարեց, որ ԳԿՊ-ն պետք է լինի համապատասխան որակով, և Բնապահպանության նախարարությունը կաջակցի պլանի մշակման գործընթացին:



Միջազգային գետավազանների շրջակա
միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)
ծրագիր



Պայմանագիր թիվ ENPI/2011/279-666

Ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում «Hulla & CO. Human Dynamics»-ի գլխավորած կոնսորցիումի կողմից

Նա ևս նշեց, որ հիդրոերկրաբանական մոնիտորինգն իրականացվում է պետական կառույցի կողմից, և դա, ի թիվս այլ բաների, վկայակոչում է նախարարության հանձնառությունը ԳԿՊ-ի մշակման գործընթացում: Նախարարությունը տեղյակ է, որ ԳԿՊ-ի մշակման համար պահանջվում են մեծ ջանքեր, ֆինանսական միջոցներ, մարդկային կարողություններ և փորձ: Հայաստանի գետավազանների 60%-ի համար ԳԿՊ-ներ մշակելու նպատակով, Նախարարությունը համագործակցում և քննարկումներ է ունենում տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ԱՄՆ ՄԶԳ, KFW:

Գերակայություն է նաև էկոլոգիական հոսքի հաշվարկումը, որի հետ կապված աշխատանքներ են իրականացվում ԱՄՆ ՄԶԳ-ի հետ համագործակցության շրջանակներում: Մոտեցումը վերջնական հստակեցնելուց հետո կմշակվի կառավարության որոշման նախագիծ, որը կանցնի նաև հանրային խորհրդատվության փուլը:

Նշանակալի միջոցառումներ են իրականացվել Արարատյան ավազանի ստորերկրյա ջրերի պահպանության ուղղությամբ. փակվել են բազմաթիվ շատրվանող/ձնշումային հորեր, որի շնորհիվ, սկսած դեկտեմբերից, արդեն կա ստորերկրյա ջրերի մակարդակի դրական փոփոխություն, և սկսվել է ինքնավերականգնման գործընթացը:

Սկսվել են նաև ջրօգտագործման թույլտվությունների տրման գործընթացի բարելավման աշխատանքները: Հաշվի առնելով, որ տրված ջրօգտագործման թույլտվություններում առկա են նշանակալի թերություններ, Ախուրյանում բոլոր թույլտվությունները չեղյալ կհամարվեն, և ջրառի համար սահմանված քանակությունները կկրճատվեն:

Ինչ վերաբերում է KFW-ի աջակցությամբ Կապսի ջրամբարի վերականգնմանը, պրն. Գրիգորյանը հայտնեց, որ կառավարման պլանի անհրաժեշտություն է ծագել ծախսերի պատշաճ նախահաշիվ կազմելու համար:

Վերջում պրն. Գրիգորյանը խնդրեց և խրախուսեց բոլորին իրենց կարծիքները ներկայացնելու ԳԿՊ-ի նախագծի վերաբերյալ՝ այդպիսով օժանդակելով ԳԿՊ-ի՝ որպես որոշումների կայացման գործիքի մշակման գործընթացին:

Պրն. Վահագն Տոնոյանը ծրագրի թիմի անունից ներկաներին կրկին շնորհակալություն հայտնեց մասնակցության և ներդրումների համար: Նրանք, ովքեր հետաքրքրված էին, հրավիրվեցին սուրճի ընդմիջումից հետո մասնակցելու Ազգային համակարգող կոմիտեի (ԱՀԿ) նիստին: Կրկին հիշեցվեց, որ հանրությունը, ինչպես նաև նախարարությունը, տարբեր այլ կառույցները և շահագրգիռ կողմերը կարող են նշված էլ. փոստի հասցեով ուղարկել լրացուցիչ այլ մեկնաբանություններ: Մեկնաբանությունների հիման վրա պլանի նախագիծը կվերանայվի և աշնանը կներկայացվի նախարարությանը: